Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 228 - Ա
որոշման

«ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ» ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	Բնակչության սոցիալական պայմանների բարելավման նպատակով նախատեսվում է Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Սաղմոսավան բնակավայրում կառուցել համայնքային կենտրոն: Համայնքային կենտրոնում կգործի երեխաների համար նախատեսված պարային խմբակ, կկազմակերպվեն մշակութային միջոցառումներ:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Նախատեսվում է ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից
3.	Բարեգործը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Բաղրամյան պողոտա 26/1, ՀՎՀՀ՝ 02507456)
4.	Ծրագիրը կատարողը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Բաղրամյան պողոտա 26/1, ՀՎՀՀ՝ 02507456)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Սաղմոսավան բնակավայր, սոցիալական
6.	Ծրագրի բյուջեն	65,850,000 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Սաղմոսավան բնակավայր
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2026 թվականի ապրիլի 30-ից մինչև 2027 թվականի դեկտեմբերի 28-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Նախատեսվում է Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Սաղմոսավան բնակավայրում կառուցել համայնքային կենտրոն, որտեղ կգործի երեխաների համար նախատեսված պարային խմբակ, կկազմակերպվեն մշակութային միջոցառումներ: Կառուցվելու է մեկ հարկանի շինություն, կիրակա-նացվեն հողային և հիմքերի աշխատանքներ, հիմնակմախքի կառուցման, նոր

		դռների և լուսամուտների տեղադրման, տանիքի կառուցման աշխատանքներ, ներքին հարդարման, ջեռուցման, ներքին ջրամատակարարման և կոյուղու, ներքին էլեկտրամատակարարման, ինչպես նաև ցանկապատման ու տարածքի բարեկարգման աշխատանքներ: Իրականացվելու է՝ 2026 թվականի ապրիլի 30-ից մինչև 2027 թվականի դեկտեմբերի 28-ն ընկած ժամանակահատվածում՝ 65,850,000 դրամի չափով:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Սաղմոսավան բնակավայրում համայնքային կենտրոնի կառուցման աշխատանքների իրականացում՝ 65,850,000 դրամի չափով:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Նախատեսված չեն:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակի համայնքապետարան
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված «Բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի» 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

22.04.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ